ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

(ուսումնական առարկայի անվանումը)

**Մասնագիտություն/ուղղություն** Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

**Որակավորումը** Բակալավր

**Ֆակուլտետ** Հասարակական գիտությունների

**Ուսուցման ձև** 4-րդ, 2-րդ կիս. հեռակա

Վանաձոր

2023 թ.

# Ծրագիր
# Արտադրական պրակտիկայի

## 1. Պրակտիկայի նպատակը

Ուսանողներին նախապատրաստել կրթական համակարգի տարբեր աստիճաններում կրթադաստիարակչական գործունեություն ծավալելուն:

Անհրաժեշտ մասնագիտական հմտությունների և կարողությունների ձևավորման համար հիմք են հանդիսացել մանկավարժության, սոցիալական մանկավարժության, սոցիալ-մանկավարժական խորհրդատվության, սոցիալական աշխատանքի մեթոդների, մանկավարժական էթիկայի, ներառական կրթության կազմակերպում, հատուկ մանկավարժության, հոգեբանության ուսումնասիրումը:

**Կոմպետենցիաների ցանկ**

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ2 կազմակերպելու և պլանավորելու ունակություն,

ԳԿ3հենքային և ընդհանուր գիտելիքներ

**ԳԿ4**մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ

ԳԿ10 որոշումների ընդունում:

Միջանձնային կոմպետենցիաներ (ՄԶԿ)՝

ՄԶԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,

ՄԶԿ2 թիմային աշխատանք,

ՄԶԿ3 միջանձնային ունակություններ,

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

ՀԳԿ3 սովորելու ունակություն,

ՀԳԿ5 նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,

ՀԳԿ11 որակի կարևորության գիտակցում,

Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

**ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

**ԱԿ6**կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները

ԱԿ12 ունակ լինեն ուրույն, թեկուզ և փոքր ներդրում կատարելու

Ուսուցչական կոմպետենցիաների զարգացումը ՈւԿ

1.Մասնագիտական կատարելագործման անհրաժեշտության գիտակցում **(Ու8)**

2.Համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն **(Ու9)**

**2. Պրակտիկայի խնդիրները.**

- ձևավորել ապագա ուսուցչի անձնավորության մանկավարժական ուղղվածությունը և երեխաների նկատմամբ մարդասիրական դիրքորոշումը,
- ձևավորել մասնագիտական գործունեության նկատմամբ ստեղծագործական և հետազոտական մոտեցման պահանջմունք
- ուսումնասիրել մանկավարժական նոր տեխնոլոգիաների կիրառման վիճակը դպրոցում,
- ձևավորել ապագա ուսուցիչների մասնագիտական կարողությունները:
- ընդլայնել, խորացնել և կայունացնել ապագա ուսուցչի մասնագիտական գիտելիքները.
- ձևավորել ապագա ուսուցչի դաստիարակչական կարողություններն ու հմտությունները.
- ձևավորել արտալսարանային և արտադպրոցական աշխատանքներ կազմակերպելու կարողություններ և հմտություններ.
- ձևավորել մանկավարժական գործընթացը վերլուծելու և գնահատելու կարողություններ.
- պրակտիկանտին ուղղորդել՝ կատարելու մանկավարժական դիտարկումներ, հետազոտություններ, քննադատաբար իմաստավորելու ուսումնադաստիարակչական գործընթացը և ուսուցիչների մանկավարժական փորձը:

**3. Պրակտիկայի հաստատությունը, վայրը**

Հանրակրթական դպրոցներ

**4. Պրակտիկայի ընթացակարգը**

*Առկա՝ 7-րդ և 8-րդ կիսամյակներում 4-ական շաբաթ տևողությամբ:*

*Հեռակա՝ 8-րդ և 9-րդ կիսամյակներում 4-ական շաբաթ տևողությամբ:*

**5. Պրակտիկայի ղեկավարների (այդ թվում պրակտիկայի անցկացման վայրի աշխատակից ղեկավարի.) պարտականությունները, գործառույթների նկարագրությունը**

**Մանկավարժության դասախոս**

- մասնակցում է ներածական և հանրագումարային կոնֆերանսներին,

- օգնում է ուսանողներին անհատական պլանը կազմելու գործում,
- ապահովում է ուսանողների խորհրդատվությունը արտադասարանային միջոցառումներին նախապատրաստվելու, ստուգում է նրանց պլանները, կոնսպեկտները,
- ընտրությամբ մասնակցում է ուսանողների վարած դասերին, դրանց կոլեկտիվ քննարկմանը,
- մասնակցում է ուսանողների կողմից կազմակերպվող արտադասարանային դաստիարակչական միջոցառումներին, կազմակերպում դրանց քննարկումները,
- ուսումնադաստիարակչական հաստատությունում մասնակցում է ուսանողների համար կազմակերպվող սեմինարներին և մեթոդական խորհրդակցություններին,
- վերլուծում է ուսանողների պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը,
- ուսուցչի, դասղեկի, խմբային ղեկավարի և առարկայի մեթոդիստի, հոգեբանի հետ համատեղ գնահատում է ուսանողի կատարած աշխատանքը:

**Դասղեկ**

ծանոթացնում է ուսանողներին դասարանի աշակերտների հետ, նրանց առաջադիմությանը, դասարանի դաստիարակչական պլաններին և հիմնախնդրին,
- անց է կացնում արտադասարանային դաստիարակչական աշխատանք աշակերտների հետ,
- օգնում է ուսանողներին՝ նշելու դաստիարակչական խնդիրները, կազմելու դաստիարակչական աշխատանքի պլանները, հաստատում և վերահսկում է պլանի կատարումը,
- մասնակցում է ուսանողների ինքնուրույն կազմակերպված արտադասարանական պարապմունքներին և դրանց քննարկմանը,
- բնութագրում է ուսանողներին որպես դասղեկական աշխատանքներ կատարողների

## 6. Պրակտիկանտի պարտականություններն են.

- պրակտիկայի վայրում լինել 6 ժամ,
- ժամանակին կատարել աշխատանքի բոլոր տեսակները, որոնք նախատեսված են մանկավարժական պրակտիկայի ծրագրով,
- ենթարկվել պրակտիկայի անցկացման վայրի ներքին կարգուկանոնի պահանջներին,
- պրակտիկայի ծրագրին համապատասխան կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների անհատական պլան,

- պրակտիկայի ընթացքում վարել մանկավարժական օրագիր, ուր նշվում է դիտման արդյունքները, վերլուծվում կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքները
- մասնակցել համակուրսեցիների պարապած դասերին և քննարկումներին

**7. Պրակտիկայի հաշվետու փաստաթղթերը.**

Պրակտիկայի ավարտին ուսանողը ներկայացնում է.

- Պրակտիկայի օրագիր
- Մեկ դասի պլան կոնսպեկտ
- Ուսանողի՝ որպես դասղեկի օգնականի անցկացրած դաստիարակչական մեկ միջոցառման կոնսպեկտ
- Հաշվետվություն իր կատարած աշխատանքների վերաբերյալ(լրացվում է օրագրի համապատասխան «Հաշվետվություն» էջում)
- Եզրակացություն տվյալ հաստատության գործունեության վերաբերյալ

**8. Պրակտիկայի գնահատումը**

**Մանկավարժական պրակտիկայի արդյունքների գնահատման հիմնական չափանիշներն են.**

- ուսանողների կողմից իրենց պրակտիկ գործունեության տեսական իմաստավորման մակարդակը,
- մասնագիտական մանկավարժական կարողությունների ձևավորման աստիճանը,
- ապագա ուսուցիչների մասնագիտական ուղղվածության և սոցիալական ակտիվության մակարդակը, (մասնագիտության նկատմամբ հետաքրքրությունը, երեխաների նկատմամբ սերը, ակտիվությունը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական և պատասխանատու վերաբերմունքը և այլն)

**Պրակտիկայի արդյունքների գնահատման համար օգտագործվում են հետևյալ մեթոդները.**

- ուսանողների պրակտիկայի վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն
- պրակտիկայի ընթացքում ուսանողների գործունեության դիտում և աշխատանքների առանձին տեսակների որակի վերլուծություն,
- զրույց կազմակերպչի, դասղեկների և ուսանողների հետ,
- դասղեկների կողմից պրակտիկանտների բնութագրերի ուսումնասիրություն,
- պրակտիկայի ընթացքում գործնական խաղերի կազմակերպում,
- անկետավորում,
- ուսանողների կողմից պրակտիկ աշխատանքներին իրենց նախապատրաստվածության աստիճանի ինքնագնահատում

Պրակտիկայի գնահատման բաղադրիչները և հատկացվող միավորները
(գնահատականը ըստ 100 միավորանոց սանդղակի)

| Գնահատման բաղադրիչները | Հատկացվող միավորը | Գնահատում |
|---|---|---|
| **1. Հաճախելիություն** | 0 - 10 | |
| **2. Առարկայական իմացություն** | 0 - 20 | |
| **3. Վարած դասերի վերլուծություն**<br>• Մեթոդական գործիքակազմի ընտրության և կիրառման կարողություն, ժամանակակից տեխնոլգիաների կիրառում<br>• դասի պլանավորման կարողություն<br>• դասաժամանակի ճիշտ օգտագործում<br>• գնահատման կարողություն | 0 - 7<br>0 - 4<br>0 - 3<br>0 - 6 | |
| **4. Մանկավարժական աշխատանք**<br>1.մանկավարժական վարպետություն<br>2.մանկավարժական մշակույթ<br>3. արտադասարանային աշխատանքի կազմակերպման կարողություն, դասղեկի ժամի անցկացում | 0 - 5<br>0 - 2<br>0 - 8 | |
| **5. Հոգեբանախորհրդատվական աշխատանք**<br>• դասարանի կոլեկտիվի կամ աշակերտի հոգեբանական բնութագրի կազմում<br>• դասի հոգեբանամանկավարժական վերլուծության անցկացում<br>• արտադասարանային միջոցառման հոգեբանական հիմնավորում | 0 - 5<br>0 - 5<br>0 - 5 | |
| **Պաշտպանություն** | 0 - 20 | |
| **Ընդհանուր միավորը** | 100 | |